ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 05 » 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000010

Ձեռնարկողը՝ ***«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ***
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26

Գործունեությունը՝ ***Մխչյան համայնքի, Մխչյան-Հովտաշեն ճանապարհի 1 հողամասում գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000010

«05» 02 2020թ.

Արարատի մարզի Մխչյան համայնքի, Մխչյան-Հովտաշեն ճանապարհի 1 հողամասում գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Արարատի մարզի Մխչյան համայնք

Արարատի մարզի Մխչյան համայնքում սեփականության իրավունքով Սարգիս Ներսիսյանին պատկանող 5.6 հա հասարակական կառուցապատման նշանակության հողամասում նախատեսվում է կառուցել գյուղմթերքների շուկա, առևտրի և սպասարկման կենտրոն (այսուհետ՝ Գյուղմթերքների շուկա):

Նկարագրական մաս. համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է կառուցել՝

ադմինիստրատիվ շենք - 1 հատ՝ 123.34 մ^2,
առևտրի սրահ - 2 հատ՝ 254.38 մ^2 գումարային մակերեսով,
ծածկած շուկա - 1 հատ՝ 1173.07 մ^2,
հյուրատուն - 1 հատ՝ 218,24^2 մ, որից օգտագործվող մակերեսը 181.32 մ^2,
պահեստ - 3 հատ՝ 2655 մ^2 գումարային մակերեսով,
ծածկ - 15 հատ՝ 12160.5 մ^2 գումարային մակերեսով,
շվաքարան - 1 հատ՝ 847 մ^2,
զուգարան - 3 հատ՝ 226.8 մ^2 գումարային մակերեսով,
սեպտիկ հորեր - 8 հատ՝ 390 մ^2 գումարային ծավալով:

Ադմինիստրատիվ շենքն ունի երկու հարկ: Յուրաքանչյուր հարկը բաղկացած է առանձին սենյակներից: Շինությունը ապահովված է միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից

- Առևտրի սրահ 1-ը և առևտրի սրահ 2-ը մեկ հարկանի շինություններ են, որոնք բաղկացած են առևտրի առանձին տաղավարներից: Շինությունները ապահովված են միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքերը կազմակերպված են փողոցի կողմից:

Առևտրի սրահ 1-ում 140.37մ² մակերեսով և առևտրի սրահ 2-ում 114.01մ² մակերեսով տարածքները ունենալու են խեցեսալե հատակներ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ-ավազե հարթեցնող շերտից:

- Ծածկած շուկան մեկ հարկանի, փակ շինություն է, որը բաղկացած չէ առանձին տաղավարներից: Այն մեծ, փակ առևտրային հրապարակ է, որտեղ նախատեսված է իրականացնել հիմնականում քամուց, փոշուց զերծ պահվող մթերքների վաճառքը: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից:

Ծածկած շուկայի 1173.07 մ² մակերեսով տարածքը ունենալու է խեցեսալե հատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ-ավազե հարթեցնող շերտից:

- Հյուրատունն ունի երկու հարկ: Շինությունը ապահովված է միջանցիկ և անկյունային օդափոխությամբ: Գլխավոր մուտքը կազմակերպված է փողոցի կողմից:

Հյուրատան 214.96 մ² մակերեսով տարածքն ունենալու է լամինատե հատակ, իսկ 145.48 մ² մակերեսով տարածքը՝ խեցեսալե հատակ: Հատակների հիմքերը բաղկացած են լինելու տոփանված խճից և ծածկի սալից, բետոնե նախապատրաստական շերտից և ցեմենտ ավազե հարթեցնող շերտից:

- Գյուղմթերքների շուկայում մթերքների պահման համար նախատեսված է կառուցել 3 պահեստ: Դրանք փակ, մեկ հարկանի կառույցներ են, որոնք ունեն գյուղմթերքների պահման համար համապատասխան բոլոր պայմանները: Պահեստների մուտքերը կազմակերպված են դիմային և հետնային ճակատների կողմից:

- Ծածկով տարածքները մեկ հարկանի, առանց արտաքին և ներքին պատերի, տանիք ունեցող բաց առևտրային տարածքներ են: Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագծի համաձայն ծածկով տարածքները թվով 15 են:

Ծածկով տարածքների համար կրող կոնստրուկցիա է հանդիսանում մետաղե տարածական կարկասը: Սյուները նախատեսված են 108x3մմ հատվածքի կլոր խողովակներից:

- Նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվում է կառուցել շվաքարան, որը տանիք ունեցող, մեկ հարկանի, առանց արտաքին և ներքին պատերի բաց տարածք է: Այն գտնվելու է հյուրատան հարևանությամբ: Շվաքարանի համար որպես կրող կոնստրուկցիա հանդիսանում է մետաղե տարածական կարկասը: Սյուները նախատեսված են 108x3 մմ հատվածքի կլոր խողովակներից:

- Գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնում նախատեսվում է կառուցել 3 զուգարան: Զուգարաններից յուրաքանչյուրը ունենալու է 8 հատ սանհանգույց, 2 հատ լվացարան, տոմսավաճառի սրահ և նախամուտք:

- Գյուղմթերքների շուկայում նախատեսվում է կառուցել 8 բետոնե սեպտիկ հոր: Երկուական սեպտիկ հոր կառուցվելու է յուրաքանչյուր զուգարանի մոտ, և ևս երկու սեպտիկ հոր հյուրատան հարևանությամբ:

ՀՀ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
RA YEREVAN

Շինությունների բոլոր փայտե տարրերը մշակված են հակահրդեհային և հականեխիչ նյութերով: Նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը բացակայում են: Շահագործման փուլում շուկայի խմելու-տնտեսական ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել համայնքային ջրագծից: Առաջացած կեղտաջրերի հեռացումը իրականացվելու է դեպի սեպտիկ հորեր: Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը տարողություններով բերվելու է համայնքից և օգտագործվելու է շինհարթակների ջրցանի համար:

Շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում բույսերի և կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր՝

- շինտեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում,
- շինանյութերի և գրունտի ծածկում անթափանց թաղանթներով,
- տեղանքում շինարարական նյութերի և թափոնի պահման արգելում,
- փորված գրունտի օգտագործում ետլիցքի և հարթեցման նպատակով,
- շինարարական և կենցաղային աղբի հավաքում,
- Արտաշատ քաղաքի աղբահանող կազմակերպության հետ կենցաղային և շինարարական աղբի և քաղաքային աղբավայրում տեղադրման համար պայմանագրի կնքում,
- շինտեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում,
- բնահողի պահում շինհարթակում ծածկված վիճակում՝ մինչև օգտագործումը,
- տարածքում բոլոր տեսակի հեղուկ նյութերի և քսուքների պահման արգելում,
- աշխատանքների ավարտից հետո տարածքի հարթեցում և բարեկարգում,
- գիշերվա ընթացքում շինարարական աշխատանքների դադարեցում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Մխչյան համայնքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Կառուցապատման հետագա գործառույթները իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի 263-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համաձայն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Մխչյան համայնքի, Մխչյան-Հովտաշեն ճանապարհի 1 հողամասում գյուղմթերքների շուկայի, առևտրի և սպասարկման կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան